



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

23-ը Հունիսի 2016թ.

Որոշում թիվ 9

գ. Վարդաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ կետերով, հիմք ընդունելով
համայնքի ավագանու 07.06.2016թ. թիվ 11 որոշումը.

Որոշում եմ՝

1. Համաձայն ՀՀ կառավարության 2015թ դեկտեմբերի 17-ի N1474-Ն որոշման,
վարկային համաձայնագրի շրջանակներում կառուցված, համայնքային
սեփականություն հանդիսացող 52.629.917.0 դրամ արժեքով, 167,62 քառ. մետր
մակերեսով «Վարդաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոնի»
շենքը, ինչպես նաև շենքի օգտագործման և սպասարկման համար
նախատեսված 0,049հա մակերեսով հողամասը (վկայական N11052016-05-0034)
նվիրատվության կարգով հանձնել Հայաստանի Հանրապետությանը:
2. Հայաստանի Հանրապետության հետ ի դեմս «Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական
հիմնարկի կնքել վերը նշված հասցեի անշարժ գույքի նվիրատվության
պայմանագիրը:



Վարդաձորի գյուղապետ՝

Ռ. Սիրականյան